ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2023/90

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023 թ. N 90

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	**«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան» ՍՊԸ**
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Սեբաստիայի փող., 3/7 ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պող., 30ա
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով 18.10.2019-18.10.2023 (ՌԴ,ԿՈԿԶՎԳ/АККОРК, РФ)

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023 թվականի հոկտեմբերի 16-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց **«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան»** ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՄԳՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	21 ապրիլի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝	25 մայիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում՝	05-08 հուլիսի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	22 սեպտեմբերի 2023թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝	03 հոկտեմբերի 2023 թ.

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար են գնահատվել **«Հասարակական պատասխանատվություն»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ՄԳՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Կրթական ծրագրերը համապատասխանում են բուհի առաքելությանը և ՈԱԾ-ին, սահմանված են դրանց վերջնարդյունքները, առկա են դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների:

Վերանայել են ԿԾ-ները, դրանց մշակման, մշտադիտարկման փաստաթղթերը:

ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ները վերանայելիս կարևորել է սովորողների գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, ավելացվել են ընտրովի առարկաները, արդիականացվել են դասավանդման մեթոդները: Շրջանավարտների պատրաստման գործում մեծ դեր են խաղում արտաքին և ներքին գործատուները:

«Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների կրթական ծրագրերը, ավարտական ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը, գործնական հմտությունների ձեռքբերման գնահատումը համապատասխանեցվել են միջազգային չափանիշներին:

Առկա է ՊԴ կազմի ընտրության քաղաքականություն, սահմանված են ՊԴ կազմին ներկայացվող պահանջներ, Բուհն ունի ՌԾ-ի իրականացման համար համապատասխան բարձր որակավորում և պրակտիկ աշխատանքային փորձ ունեցող ՊԴ կազմ:

Բուհն ապահովված է ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով: Բուհի ռեսուրսային բազայի համալրվածությունը բավարար է: Այս ուղղությամբ աշխատանքները ունեն շարունակական բնույթ: Շարունակականության ապահովման տեսանկյունից ՄՈՒՀ-ը տեսանելիորեն բարելավել է բժշկական մասնագիտությունների համար անհրաժեշտ հատուկ նյութատեխնիկական բազան, սակայն սակավ տեսանելի է մյուս մասնագիտությունների հատուկ կարիքների վեր հանման և վերազինման դինամիկան:

2. ***Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը***

«Մխիթար Գոշ» հայ–ռուսական միջազգային համալսարանը որդեգրել է շարունակական կրթության սկզբունքը: Համալսարանն ունի Որակաորումների ազգային շրջանակին համահունչ

հստակ առաքելություն: Բուհի արտաքին և ներքին շահակիցները հիմնականում ներգրավված են բուհի առաքելության, նպատակների և խնդիրների սահմանման, դրանց վերանայման կամ փոփոխության գործում:

Բուհն ունի կառավարման բարեփոխված համակարգ և ստորաբաժանումներ, առկա են ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական բավարար ռեսուրսներ: Նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի (AKKORK), արտաքին փորձագետի մասնակցությամբ ներքին աուդիտի արդյունքում փոփոխվել է ինչպես Համալսարանի կառուցվածքը, այնպես էլ լրամշակվել և հաստատվել են ստորաբաժանումների կանոնադրությունները, պաշտոնի անձնագրերը: ՄԳՀ-ի կառավարման կառուցվածքը կրել է դինամիկ փոփխություններ վերջին տարիների ընթացքում: ՄՈՒՀ-ը փորձել է գտնել արդյունավետ տարբերակներ սահմանված նպատակների և խնդիրների իրագործման համար:

Որպես մշտադիտարկման մեխանիզմ ՄՈՒՀ-ը դիտարկում է հաշվետվողականությունը՝ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները, առանձին գործընթացների արդյունավետությունը ներկա փուլում մշտադիտարկվում է ՈԱԿ հարցումների միջոցով, որը որպես գործող մեխանիզմ դեռևս կայացման փուլում է: Որակի ապահովման քաղաքականությունը լիարժեք ներդրված չէ, ՈԱ հարցումները թիրախային չեն, իսկ ընդգրկված հարցադրումները չեն վեր հանում անհարժեշտ տեղեկատվությունը:

Գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարման մշակույթը զարգացման փուլում է և ընդունվել է բուհի կողմից որպես զարգացման կարևոր ուղղություն:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

Առկա են ուսանողների հավաքագրման, կարիքների վերհանման մեխանիզմներ, ուսանողների համար կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ, ուսանողները ներգրավված են իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացում: ՄԳՀ-ում գործում է երկու ՈՒԽ՝ օտարերկրյա և տեղացի ուսանողների, որտեղ ընդգրկված են նաև հեռակա համակարգի ուսնողները:

ՄԳՀ-ն կարևորում է համալսարանի գիտահետազոտական ուղղության զարգացումը:Նախորդ հավատարմագրումից հետո բուհը մշակել է բարելավման պլան և համապատասխան ժամանակացույց շտկելու հետազոտության ոլորտում առկա խնդիրները: Ձևավորվել է գիտահետազոտական կենտրոն, ՄԳՀ-ի աշխատակիցների դրամաշնորհային գործունեությունը զարգացնելու նպատակով 2022 թվականին Համալսարանը գրանցվել է Erasmus+ ծրագրում, որը հնարավորություն կընձեռի մասնակցել միջազգային տարբեր դրամաշնորհային ծրագրերի:

ՄԳՀ-ի թե դասախոսները թե ուսանողները մասնակցում են այլ բուհերի կողմից կազմակերպված ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների այդ թվում նաև միջազգային:

Բուհը քայլեր է իրականացրել հետազոտական և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ: Այս տեսանկյունից կարևոր է բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում հետազոտության համար նախատեսված կառուցամասերի առկայությունը, ինչպես նաև «Բուժական գործ», «Ստոմատոլոգիա» ուսումնական պլաններում որպես կամընտրական առարկա ներդրվել է «Գիտական հետազոտությունների մեթոդոլոգիա» դասընթացը:

ՌԾ-ում արտաքին կապերն ու միջազգայնացումը նշվում են որպես բուհի զարգացման կարևորագույն ուղղություններ: Այն փաստը, որ համալսարանի կառուցվածքում ավելացվել է միջազգային գործունեության գծով պրոռեկտորի հաստիքը և միջազգային աշխատանքների բաժինը, հաստատում է, ղեկավարության կողմից ոլորտի զարգացման կարևորվումը:
Արտաքին հարաբերությունների զարգացման անհրաժեշտության վրա ազդող ամենակարևոր գործոնը օտարերկրյա քաղաքացիների համար անգլերենով իրականացվող կրթական ծրագրերի առկայությունն է:
ՄՈՒՀ-ի հաշվետվողականության համակարգը լիարժեք չի արտահայտում իրական գործառնական կապերը՝ ներքևից վերև, վերևից ներքև հաշվետվողականությունը: Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչը թույլ է և գնահատման համար հիմք չեն հանդիսանում: Լիարժեք ապահովված չէ տեղեկատվության հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ հետադարձ կապի և գիտելիքների փոխանցման մեխանիզմները դեռևս ձևավորման փուլում են,

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան ՍՊԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հասարակական պատասխանատվություն»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - վելուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,
   - հեռակա համակարգի դասընթացների կազմակերպման բարելավմանը, հարմարեցնելով այն հեռակա ուսուցման ձևին,
   - ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման կայուն մեխանիզմների առավել արդյունավետ կիրառմանը՝ գնահատելով արդյունքները և բարելավելով դրանք,
   - ՊԴ կազմի վարկանիշավորման կարգի վերանայմանը և գործարկմանը՝ գնահատման հիմքում դնելով հստակ վերլուծական տվյալներ,
   - հետազոտական ոլորտում ներբուհական դրամաշնորհների ֆինանսավորման համար համապատասխան միջոցներ նախատեսելու և հատկացնելու անհրաժեշտությանը,
   - ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ակտիվացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը՝ բոլոր մասնագիտությունների գծով,

- Համալսարանի կառավարման վրա որակի ապահովման համակարգի ազդեցության բարձրացմանը:

4. Կազմակերպել ՄԳՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄԳՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. հոկտեմբերի 25
ք.Երևան